Հավելված 6
ՀՀ ԱՄ ԹՀ ԳՀԾՁԲ -24/158-3* ծածկագրով
Գնանշման հարցման մրցույթի հրավերի

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ *ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ* ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ և ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՄ ԹՀ ԳՀԾՁԲ-24/158-3*

«13» դեկտեմբերի 2024թ.

ք. Թալին

«Թալինի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Տ.Սափեյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Նախագծերի Փորձաքնություն>>,ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Արմեն Ծատությանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Թալին համայնքի *կարիքների համար* նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության և եզրակացության տրմադրման ծառայությունների** պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:[1]

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ)Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

---

[1] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա «մատուցվում է» բառից հետո լրացվում է «քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին և» բառերը*

[2] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա 2.1.2 կետի «ա» պարբերությունը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ. «Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պատշաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը»*

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[3]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[4]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը

---

[3] *Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:*

[4] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա պայմանագրի նախագծի 3.1 կետը 2-րդ նախադասությունից հետո լրացվում է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ, «Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը , տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ:Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:»:*

համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2 240 000 (երկու միլիոն երկու հարյուր քառասուն հազար**) ՀՀ դրամ:

3-ին չափաբաժին- **1 470 000** *(մեկ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար)* ՀՀ դրամ

5-րդ չափաբաժին-**770 000** *(յոթ հարյուր յոթանասուն հազար)* ՀՀ դրամ

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[5]

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[6] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[7]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[5] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[6] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սխալմամբ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[7] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա պայմանագրի նախագծը լրացվում է հետևյալ բովանդակությամբ 5.5.1 կետով. «5.5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման,կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չտրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.*
...» իսկ 5.4 կետում «5.2 և 5.3 » թվերը փոխարինվում են «5.2,5.3 և 5.5.1» թվերով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[8]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[9]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[10]

---

[8] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[9] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[10] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Թալինի համայնքապետարան	<<Նախագծերի փորձաքննություն >> ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ գ.Թալին Գայի 1	ՀՀ Լոռու մարզ գ. Դարպաս 1-ին փ
Բանկը՝ ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն	5-րդ նրբ տուն 5
ՀՎՀՀ 900462001950	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» «Լոռի» մասնաճյուղ
ՀԿՀՀ 05030561	Հ/Հ 20514221823410001
Համայնքի ղեկավար՝ Տ. Սափոնյան	ՀՎՀՀ 06960002
----------	Տնօրեն՝ Արմեն Սաղաթելյան
/ստորագրություն/	----------
Կ.Տ.	/ստորագրություն/
	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 13 » 12 2024 թ. կնքված
ՀՀ ԱՄ ԹՀ ԳՀԾՁԲ -24/158* *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
3	50531140	Թալին համայնքի Զարինջա, Կարմրաշեն, Ոսկեթաս, Զովասար, Ցամաքասար, Ն.Սասնաշեն, Վ.Բազմաբերդ բնակավայրում խմելաջրի ցանցի հիմնանորոգման և Շղարշիկ բնակավայրի ՕԿՋ աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության և եզրակացության տրմադրման ծառայություն	դրամ	1 470 000	1	Թալին համայնքի նշված բնակավայրերը	Պայմանագիր կնքելուց և նախագծանախահաշվային փաստաթղթերը տրամադրելուց հետո 20օր
5	50531140	Թալին համայնքի Արագածավան, Ակունք, Արտենի, Պարտիզակ, Վ.Սասնաշեն, Թաթուլ բնակավայրերի և Թալին քաղաքի Կրպեյան, Ձորափնյա, Սպանդարյան 2 նրբ, Կոմիտաս-Բարեկամություն, Կոմիտաս 1 նրբ, Կոմիտաս 2 նրբ, Այգեստան, Շահումյան 3, Խանջյան 17,19,21,23,25, Թումանյան 15-Խանջյան 15 Խանջյան 20, Տերյան 28, Գայի 1 փողոցների և շենքերի բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության և եզրակացության տրմադրման ծառայություն	դրամ	770 000	1	Թալին համայնքի նշված բնակավայրերը	Պայմանագիր կնքելուց և նախագծանախահաշվային փաստաթղթերը տրամադրելուց հետո 20օր

✓ **Փորձաքննության եզրակացությունները տրամադրել ըստ առանձին նախագծանախահաշվային փաստաթղթերի: բոլոր չափաբաժինների համար:**

Հաղթող մասնակիցն իր միջոցներով պատվիրատուից (Թալին խոշորացված համայնք Գայի 1 հասցեից) վերցնում է նախագծանախահշվային փաստաթղթերը, անցկացնում փորձաքննություն և հետ վերադարձնում պատվիրատուին:
Լիցենզիա՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար համապատասխան
Կատարողը պարտավոր է յուրաքանչյուր փորձաքննության ենթակա օբյեկտի համար ներկայացնել գնային հաշվարկ, որը չպետք է գերազանցի ՀՀ կառավարության 23.06.2011թ. №879-Ն որոշմամբ սահմանված կողմնորոշիչ արժեքները:
. Կատարողը պարտավոր է հաշվի առնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջները.
. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակ բնօրինակից և էլեկտրոնային տարբերակով:
Փորձաքննությունն իրականացվում է և փորձաքննություն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն՝ ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան:
Փորձաքննությունն իրականացնելու համար պատվիրատուի կողմից կներկայացվի
• Նախագծային փաստաթղթեր (ընդհանուր բացատրագիր, գլխավոր հատակագիծ, ճարտարապետաշինարարական լուծումներ, ինժեներական սարքավորումներ, ցանցեր և համակարգեր, հիմնական շինարարական նյութերի, արտադրանքների կոնստրուկցիաների հավաք ամփոփագրեր),
• Նախահաշվային փաստաթղթեր (Ամփոփ, օբյեկտային և լոկալ նախահաշիվներ):
Տեխնիկական առաջադրանք
Առաջադրանքի վերջնական նպատակն է նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:
Փորձաքննության միջոցով ճարտարապետաշինարարական փաստաթղթերով սահմանված նախագծային լուծումների ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին համապատասխանության ապահովում:
Փորձաքննության միջոցով աշխատանքային նախագծի ներքո մշակված
1. գծագրական մասի և մասնագրերի,
2. նախագծային և նախահաշվային փաստաթղթերով ամրագրված ծավալների միմյանց համապատասխանության ապահովում:
Փորձաքննության միջոցով նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտումներով մշակված քաղաքաշինական փաստաթղթերում նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերաբերյալ նախագծային կազմակերպության հետ համատեղ փոփոխությունների, լրացումների, այլընտրանքային լուծումների, լուծման առավել ռացիոնալ տարբերակների քննարկում՝ փորձաքննվող փաստաթղթերի պարտադիր լրամշակման պահանջով:
Պատվիրատուի տեխնիկական բնութագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի համար փորձաքննության ապահովում, մասնագիտական եզրակացությունների առկայությամբ համալիր փորձաքննության արդյունքներով ամփոփ եզրակացության ներկայացում:

Նախագծողի կողմից օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների ու պայմանների կոպիտ խախտման դեպքում համապատասխան առաջարկությամբ միջնորդագրի ուղղում: Պատվիրատուին եզրակացության տրամադրում՝ հետևյալ բովանդակությամբ.

Փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը և դրանց համառոտ բնութագիրը.

2) ելակետային փաստաթղթերին և օբյեկտի նախագծման տեխնիկական պայմաններին նախագծային լուծումների համապատասխանության վերաբերյալ կատարված եզրահանգումները.

3) հիմնական նախագծային լուծումների վերլուծության արդյունքները, համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները.

4) ընդունված նախագծային լուծումների վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները, նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականները, առաջարկվող ճշտումների հիմնավորումները՝ պարտադիր հղում կատարելով այն նորմին, որի խախտումն արձանագրվել է.

5) փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով կատարված հիմնական փոփոխությունները և լրացումները.

6) քաղաքաշինական փաստաթուղթը երաշխավորելու կամ այն լրամշակման վերադարձնելու կամ այն մերժելու մասին որոշման հիմնավորումները:

Փորձագիտական մարմնի դիտողություններն ու առաջարկությունները կարող են ներկայացվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների ապահովման մասով:

Բացի այդ, հետևյալ ձևակերպումները

1. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան,
2. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին,
3. Նախագիծը երաշխավորվում է դրական եզրակացությամբ՝ ..... հազ.դրամ նախահաշվային արժեքով,
4. Փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ցանկը:

Փորձագիտական դրական եզրակացությունը չի կարող պարունակել նախագծային լուծումների վերաբերյալ դիտողություններ, առաջարկություններ կամ նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականներ:

Ամփոփիչ ձևակերպում.

1. «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, կամ
2. «Նախագիծը վերադարձվում է լրամշակման, կամ
3 «Նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական պահանջներին

4. . Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակ բնօրինակից և էլեկտրոնային տարբերակով:

** Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում*

**ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Թալինի համայնքապետարան
Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ ք.Թալին Գայի 1
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900462001950
ՀՎՀՀ 05030561
Համայնքի ղեկավար Տ. Ապիեյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<<Նախագծերի փորձաքննություն >> ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ գ. Դարպաս 1-ին փ
5-րդ նրբ տուն 5
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» «Լոռի» մասնաճյուղ
Հ/Հ 2051422182341001
ՀՎՀՀ 06960002
Տնօրեն՝ Արմեն Ծատուրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«13» 12 2024 թ. կնքված
ՀՀ ԱՄ ԹՀ ԳՀՇՁԲ -24/158-3* *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	50531140	Թալին համայնքի Հարինջա, Կարմրաշեն, Ոսկեթաս, Հովասար, Ցամաքասար, Ն.Սասնաշեն, Վ.Բազմաբերդ բնակավայրում խմելաջրի ցանցի հիմնանորոգման և Շղարշիկ բնակավայրի ՕԿՋ աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության և եզրակացության տրմադրման ծառայություն											1 470 000	1 470 000
5	50531140	Թալին համայնքի Արագածավան, Ակունք, Արտենի, Պարտիզակ, Վ.Սասնաշեն, Թաթուլ բնակավայրերի և Թալին քաղաքի Կրպեյան, Ձորափնյա, Սպանդարյան 2 նրբ, Կոմիտաս-Բարեկամություն, Կոմիտաս 1 նրբ, Կոմիտաս 2 նրբ, Այգեստան, Շահումյան 3, Խանջյան 17,19,21,23,25, Թումանյան 15-Խանջյան 15 Խանջյան 20, Տերյան 28, Գայի 1 փողոցների և շենքերի բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության և եզրակացության տրմադրման ծառայություն											770 000	770 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամառոական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Թալինի համայնքապետարան
Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ ք.Թալին Գայի 1
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900462001950
ՀՎՀՀ 05030561
Համայնքի ղեկավար Տ. Սալբեյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Նախագծերի փորձաքննություն >> ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ գ.Դարպաս 1-ին փ
5-րդ նրբ տուն 5
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» «Լոռի» մասնաճյուղ
Հ/Հ 20514221823410001
ՀՎՀՀ 06960002
Տնօրեն՝ Արմեն Ծաղիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

INECOBANK

10.12.2024թ № G 9462

ԵՐԱՇԽԻՔ N EA24/01183
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Թալինի համայնքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) և **<<ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ>> ՍՊԸ-ի** (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք **N ՀՀ ԱՄ ԹՀ ԳՀԾՁԲ-24/158-3** պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **310,560.00 (երեք հարյուր տասը հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900465101096** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է մինչև **30/01/2025թ.**-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի **talingnumner@mail.ru** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք.Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) **N ՀՀ ԱՄ ԹՀ ԳՀԾՁԲ-24/158-3** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ <<ՎԱՆԱՁՈՐ>> մասնաճյուղ

Կառավարիչ՝ ---------- **Վահրամ Հակոբջանյան**

Կատարող Աշոտ Եղոյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ. (010) 510-510 (5680)

INECOBANK

10.12.2024թ. N G9463

ԵՐԱՇԽԻՔ N EA24/01184
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Թալինի համայնքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **N ՀՀ ԱՄ ԹՀ ԳՀԾՁԲ-24/158** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **<<ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ>> ՍՊԸ-ի** (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք **N ՀՀ ԱՄ ԹՀ ԳՀԾՁԲ-24/158-3** պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **465,840.00 (չորս հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900465101096** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է մինչև **30/01/2025թ.**-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի **talingnumner@mail.ru** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք.Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) **N ՀՀ ԱՄ ԹՀ ԳՀԾՁԲ-24/158-3** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ <<ՎԱՆԱՁՈՐ>> մասնաճյուղ

Կառավարիչ ---------- **Վահրամ Հակոբջանյան**

Կատարող Աշոտ Եղոյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ. (010) 510-510 (5680)

ԻՆԵԿՈԲԱՆԿ

10.10.2022 № 299

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

քաղաք Երևան **տասը հոկտեմբերի երկու հազար քսաներկու թվականի**

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Բանկ), ի դեմս գործադիր տնօրեն Արեն Նալթակյանի, ով գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, լիազորում է «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Վանաձոր» մասնաճյուղի կառավարիչ **Վահրամ Հակոբջանյանին** (անձնագիր՝ AN0437852, տրված՝ 11.04.2013թ.-ին 018-ի կողմից)

1. հանդես գալու Բանկի անունից և Բանկի ներքին իրավական ակտերով և փաստաթղթերով սահմանված կարգով և չափերով կնքել քաղաքացիաիրավական գործարքներ, որոնք անհրաժեշտ են «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Վանաձոր» մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված ֆինանսական գործառնությունների իրականացման համար:
2. հանդես գալու Բանկի անունից ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայությունում և իրականացնելու տրանսպորտային միջոցի գրավի (ներառյալ՝ հաջորդող գրավի, առուվաճառքի և գրավի/հաջորդող գրավի) պայմանագրերից ծագող Բանկի գրավի իրավունքի գրանցման հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ ներկայացնելու դիմումներ, ստանալու գրավի իրավունքի գրանցման վկայականներ, ստորագրելու սույն լիազորության հետ կապված ցանկացած փաստաթուղթ:
3. ստորագրելու պարտքի տարաժամկետ մարման պայմանագիր կնքելու օֆերտաներ, պարտքի տարաժամկետ վճարման համաձայնագրեր և հաշտության համաձայնագրեր (ներառում է նաև կնիքով կնքելը):

Սույն լիազորագրով նախատեսված լիազորությունները տրված են առանց վերալիազորման իրավունքի:

Սույն լիազորագիրն ուժի մեջ է մտնում տրման պահից և գործում է **3 (երեք) տարի ժամկետով**: Վահրամ Հակոբջանյանի՝ զբաղեցրած պաշտոնից ազատվելու դեպքում սույն լիազորագիրը դադարում է վերջինիս պաշտոնից ազատման օրը:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ԱՐԵՆ ՆԱԼԹԱԿՅԱՆ

ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ, 0001, ք. Երևան, Թումանյան փ. 17, Հեռ.՝ (+374 10) 510 510
Ֆաքս՝+(37410) 510 573, էլ. փոստ՝ inecobank@inecobank.am, www.inecobank.am

ԻՆԵԿՈԲԱՆԿ

10.10.2022 № 299

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

քաղաք Երևան **տասը հոկտեմբերի երկու հազար քսաներկու թվականի**

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Բանկ), ի դեմս գործադիր տնօրեն Արեն Նալթակյանի, ով գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, լիազորում է «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Վանաձոր» մասնաճյուղի կառավարիչ **Վահրամ Հակոբջանյանին** (անձնագիր՝ AN0437852, տրված՝ 11.04.2013թ.-ին 018-ի կողմից)

1. հանդես գալու Բանկի անունից և Բանկի ներքին իրավական ակտերով և փաստաթղթերով սահմանված կարգով և չափերով կնքել քաղաքացիաիրավական գործարքներ, որոնք անհրաժեշտ են «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Վանաձոր» մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված ֆինանսական գործառնությունների իրականացման համար:
2. հանդես գալու Բանկի անունից ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայությունում և իրականացնելու տրանսպորտային միջոցի գրավի (ներառյալ՝ հաջորդող գրավի, առուվաճառքի և գրավի/հաջորդող գրավի) պայմանագրերից ծագող Բանկի գրավի իրավունքի գրանցման հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ ներկայացնելու դիմումներ, ստանալու գրավի իրավունքի գրանցման վկայականներ, ստորագրելու սույն լիազորության հետ կապված ցանկացած փաստաթուղթ:
3. ստորագրելու պարտքի տարաժամկետ մարման պայմանագիր կնքելու օֆերտաներ, պարտքի տարաժամկետ վճարման համաձայնագրեր և հաշտության համաձայնագրեր (ներառում է նաև կնիքով կնքելը):

Սույն լիազորագրով նախատեսված լիազորությունները տրված են առանց վերալիազորման իրավունքի:

Սույն լիազորագիրն ուժի մեջ է մտնում տրման պահից և գործում է **3 (երեք) տարի ժամկետով**: Վահրամ Հակոբջանյանի՝ զբաղեցրած պաշտոնից ազատվելու դեպքում սույն լիազորագիրը դադարում է վերջինիս պաշտոնից ազատման օրը:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ **ԱՐԵՆ ՆԱԼԹԱԿՅԱՆ**

ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ, 0001, ք. Երևան, Թումանյան փ. 17, **Հեռ.**՝ +(37410) 510 510
Ֆաքս՝+(37410) 510 573, **էլ. փոստ**՝ inecobank@inecobank.am, **www.inecobank.am**